

**ԱՖՐԻԿԱՆ ՄԱՅՐՑԱՄԱՔՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ
ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ***

Ժաննա Հարությունյան

Բանալի բառեր՝ Ֆրանսիա, Աֆրիկա, ռազմական միջամտություն, ազդեցության ոլորտ (prz carrn), քաղաքական շահ, տնտեսական շահ, իրավապայմանագրային հիմք:

Աֆրիկայի նկատմամբ հետաքրքրությունը համակել է աշխարհի այնպիսի մեծ խաղացողների, ինչպիսիք են՝ ԱՄՆ, Չինաստանը և եվրոպական պետությունները. որոշները՝ մեծ չափով, որոշները՝ փոքր: Մասնավորապես, Պեկինի աֆրիկյան քաղաքականության հիմքում ընկած է տնտեսական էքսպանսիան: Ինչ վերաբերում է եվրոպական պետություններին, ապա նրանք վաղուց զարգացած հարաբերություններ ունեն Աֆրիկյան նախկին գաղութների հետ և դա մեծ չափով վերաբերում է Ֆրանսիային: Ֆրանսիան լծակներ ուներ աֆրիկյան շուկաներում, և մեծապես շահագրգռված էր իր ապրանքը այնտեղ յուրացնելու գործում, իսկ մշակութային կապը պահում էր ֆրանսերենի միջոցով, որը շատ աֆրիկյան պետություններում համարվում էր պետական լեզու: Բայց ամեն դեպքում Ֆրանսիան մտահոգված էր, որ իր ազդեցությունը Աֆրիկայում նվազում է ԱՄՆ-ի և Չինաստանի ազդեցության աճի հաշվին: Աֆրիկյան մայրցամաքը և՛ տնտեսական, և՛ ժողովրդագրական առումով զարգացման մեծ պոտենցիալ ունի, ուստի Աֆրիկայի համար պայքարն ընթանում էր լայն հարթակով և տասնամյակներ շարունակ Աֆրիկյան Ֆրանսիայի համար եղել է ազդեցության ոլորտ (prz carrn)[1]

Ֆրանսիան Աֆրիկայում իր քաղաքականության հիմքում դնում էր տնտեսական և քաղաքական շահերը.

1. Աֆրիկյան նավթի և մետաղների կարևոր մատակարար է Ֆրանսիայի համար.
2. Ֆրանսիայի արտահանության 5 տոկոսը բաժին է ընկնում Աֆրիկյան մայրցամաքին.
3. Այդ տարածաշրջանում ապրում է շուրջ 240.000 ֆրանսիացի:

Ֆրանսիական քաղաքական գործիչները շահագրգռված են տարածաշրջանը պահել Ֆրանսիայի հետաքրքրությունների սահմանում՝ նշելով, որ «Աֆրիկյան մայրցամաքը մեր հարևանն է, և երբ այն ցնցվում է հակամարտություններից, ապա ցնցվում ենք նաև մենք»,- ասել է Ֆրանսիայի խորհրդարանի ներկայացուցիչ Անդրե Դուլան[2]: Այնուամենայնիվ, Ֆրանսիայի քաղաքական ներկայացուցիչները միակարծիք չեն Ֆրանսիայի համար Աֆրիկայի դերի հարցում, և շատերը կարծում են, որ այն ռեսուրսները, որ ծախսվում են Աֆրիկայի վրա, շատ ավելի նպատահարմար էր տեղակայել Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում, որտեղ Ֆրանսիայի տնտեսական ապագան էր: Նրանք, ովքեր դեմ էին Ֆրանսիայի ռազմական ներկայությանը մայրցամաքում, համարում էին այն ոչ արդյունավետ և հակաժողովրդավարական [3]: Ամեն դեպքում Ֆրանսիայի ռազմական հետաքրքրությունը Աֆրիկայի նկատմամբ անժխտելի է, և Ֆրանսիային դժվար էր ձեռնպահ մնալ աֆրիկյան էթնիկ հակամարտություններին և, ընդ-

* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

հանրապետ, Աֆրիկայի քաղաքական կյանքին ներգրավվածությունից:

Ֆրանսիայի աֆրիկյան նախկին գաղութային պետությունների հետ ռազմական համագործակցությունը երկու ուղղություն ուներ. առաջինը՝ դա մայրցամաքում ռազմական ռիսկերի կրճատումն էր: Ֆրանսիան կոմնակից էր ժողովրդավարությանը և իրավական պետությունների կայացմանը: Դրանից ելնելով՝ առաջարկում էր աֆրիկյան պետություններին ռազմական պայմանագրեր կնքել Ֆրանսիայի հետ և կրճատել աֆրիկյան ռազմական ուժերը՝ Աֆրիկյան դարձնելով անվտանգ գոտի[4]: Երկրորդը վերաբերում էր Ֆրանսիայի ռազմական ներխուժումներին և մայրցամաքում Ֆրանսիայի ռազմական ներկայությանը: Ֆրանսիան ռազմական ներխուժումներ է իրականացնում՝ մայրցամաքում խաղաղության և կայունության պահպանման պատրվակով, ինչն էլ Ֆրանսիայում հակասությունների տեղիք է տալիս:

1962-1995 թթ. ընթացքում Ֆրանսիան 19 անգամ ռազմական ներխուժում է կատարել աֆրիկյան տարբեր պետությունների տարածք[5]: Ներխուժումների մեծ մասը նպատակ է ունեցել «պաշտպանել Ֆրանսիայի ժողովրդին և պայքարել անօրինական կառավարությունների դեմ»[6]: 1960թ. 14 ֆրանսիական գաղութներ (Արևմտյան և Էկվատորիալ Աֆրիկայում, ներառյալ Մադագասկարում) անկախություն ստացան: Մինչ այդ՝ Ֆրանսիան քայլեր էր ձեռնարկում պահպանելու Ֆրանսիական գաղութային տարածքը օրինական ճանապարհով: 1958թ. Ֆրանսիական նոր Սահմանադրության ընդունումից հետո անկախացած գաղութները մտան արդեն ստեղծված Ֆրանսիական Միության կազմի մեջ (բացի Գվինեայից)՝ բաժանվելով երկու տարածաշրջանային խմբերի՝ Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա և Ֆրանսիական Էկվատորիալ Աֆրիկա (ներառյալ Մադագասկարը): Տարածաշրջանները ղեկավարում էին բարձր հանձնակատարները՝ գեներալները[7]: Երկու տարի անց Սահմանադրությունը կրկին փոխվեց, և Միության բոլոր անդամները անկախացան[8]: Հինգերորդ Հանրապետության հիմնադիր-նախագահ Շառլ դը Գոլը, իր համախոհների և Աֆրիկյան առաջնորդների հետ ստեղծեց Ֆրանկաֆրիկյան (Françafrique) կառույցը, որն աֆրիկյան պետությունների անկախությունից հետո համագործակցության նոր հարթակ էր ֆրանսիայի և իր նախկին գաղութների միջև[9]:

Այսպիսով՝ Ֆրանսիան դե յուրե ճանաչեց իր նախկին գաղութների անկախությունը, բայց դե ֆակտո շարունակում էր համակարգել գաղութների գործունեությունը, այսինքն՝ գաղութների կյանքին ուղղակի միջամտությունը փոխվեց անուղղակի միջամտության: Անկախացած գաղութներից որոշները ռազմական աջակցության և համագործակցության երկկողմ պայմանագրեր կնքեցին Ֆրանսիայի հետ, որոնք էլ դարձան Ֆրանսիայի ռազմական քաղաքականության փաստաթղթային հիմքերը: Որոշ պայմանագրեր մինչ այժմ գործում են: Աֆրիկյան պետությունների հետ կնքված ռազմական բնագավառում համագործակցության պայմանագրերը երկու տեսակ էին. համապարփակ երկկողմ պայմանագիր պաշտպանության վերաբերյալ, որը նշանակում էր, որ Ֆրանսիան իր վրա պատասխանատվություն է վերցնում պաշտպանելու այդ պետությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական սպառնալիքներից[10]: Երկրորդ խմբին էին պատկանում ռազմատեխնիկական աջակցության պայմանագրերը: Այս պայմանագիրը կնքվեց բոլոր 14 նախկին գաղութների հետ՝ բացառությամբ Գվինեայի: Այնուհետև այսպիսի պայմանագրեր կնքվեցին նաև նախկին բելգիական գաղութների հետ (Կահիրե, Բուրունդի, Ռուանդա) և նախկին պորտուգալական գաղութ Գվինեա-Բիսաուի հետ[11]: Շուրջ 25 աֆրիկյան պետությունների հետ ռազմական ոլորտում համագործակցության պայմանագրերը Ֆրանսիային լայն հնարավորություն էին տալիս իրականացնելու իր ռազմական քաղաքականությունը՝ օգտագործելով իր ռազմական ուժերը: Այս ամենը թույլ էր տալիս Ֆրանսիային պահպանել իր գլխավոր խաղացողի

դերը նախկին գաղութային տարածաշրջանում:

Ֆրանսիան աֆրիկյան մայրցամաքի այդ հատվածում ձգտում էր միայնակ գործելու՝ հուսալով ստանալ աֆրիկյան պետությունների աջակցությունը: Շառլ դը Գոլի կառավարման տարիներին ֆրանսիան ոգևորված էր աֆրիկյան ազգային բանակների ստեղծմամբ: 1959թ. փետրվարի 9-ին Շառլ դը Գոլը ուղղակիորեն հայտարարեց, որ «Բանակը, որ պետք է պաշտպանի Միությունը՝ մեկն է: Մեկ հրամանատարության մեջ»[12]: Ֆրանսիական բանակը կար և մնում էր Աֆրիկայի անվտանգության միակ երաշխավորը, և այդ ամենը քաջ գիտակցում էին և՛ Աֆրիկայում և՛ Ֆրանսիայում: Սակայն անհրաժեշտություն առաջացավ փոխելու աֆրիկյան անվտանգության համակարգը, և ստեղծվեց նոր անվտանգության համակարգ: Ֆրանս-աֆրիկյան ռազմական պայմանագրերից ելնելով՝ աֆրիկյան պետություններում ռազմական աջակցության կենտրոններ էին ստեղծվել, որի գործողությունը կազմակերպում էր 1961թ.-ին ստեղծված համագործակցության նախարարությունը[13]: Այս պայմանագրերը Ֆրանսիային արագ արձագանքման հնարավորություն էին տալիս, որոնք էլ Ֆրանսիան իրականացնում է Սև Աֆրիկայում տեղակայված իր ռազմական բազաների օգնությամբ, որոնք ցրված էին զրեթե բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում, և, իհարկե, օդուժը, որը ամեն պահի պատրաստ էր միջամտելու հակամարտություններին[14]: Աֆրիկյան պետությունների մոտ հինգ հազար զինյալից բաղկացած ազգային բանակները կարևոր տեղ էին զբաղեցնում ֆրանկոֆոն աֆրիկայի անվտանգության համակարգում: Ազգային բանակները, որոնց զենք-զինամթերքը բավականացնում էր ինքնապաշտպանական գործողություններ իրականացնելու համար, խնդիր ունեին կադրերի ապահովման գործում: Բանակի շարքային կազմը ապահովում էին աֆրիկացիները, իսկ հիմնական սպայական կազմը՝ ֆրանսիացիները: Նախապատվությունը չէր տրվում աֆրիկյան սպաներին, բայց արդեն 1960-ական թթ. այն հրատապ դարձավ: 1956-1965թթ. Ֆրանսիայի և Ալժիրի ռազմական ինստիտուտները տվեցին 275 շրջանավարտ-սպաներ. նրանցից միայն 77 էին աֆրիկացի[15]:

Ֆրանսիան ամբողջ ֆրանկոֆոն[16] Աֆրիկյան բաժանել էր երկու ռազմավարական շրջանի՝ Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայի պետությունները և Հնդկական օվկիանոսի հարող պետությունները՝ ներառյալ Մադագասկար և Ջիբութի: Կենտրոնաֆրիկյան շրջանն իր հերթին բաժանվել էր երեք գոտիների, որոնց կենտրոնակայանները գտնվում էին Դաքարում, Աբուջանում և Բրազզավիլում: Աֆրիկայում ռազմական գործողություններ ծավալելու համար Ֆրանսիական ուժերի մեկ մասը գտնվում էր աֆրիկյան բազաներում, իսկ մյուս՝ հիմնական զանգվածը գտնվում էր Ֆրանսիայում՝ պատրաստ լինելով իսկույն տեղափոխվելու աֆրիկյան մայրցամաք: Առավել կարևոր բազաներ էին Դակարն, Ֆորտ-լամը Նջամենայում, Պուենտ-Նուարը Բրազզավիլում, Դիեգո-Սուարեսը Մադագասկարում, որտեղից Ֆրանսիական զորքերը հեռացան 1974թ.[17]: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիան Աֆրիկայում ստեղծել էր ռազմական համակարգ՝ հիմնվելով ռազմական բազաների (կենտրոնակայանների) վրա, որտեղ գերակշռում էին ֆրանսիական ռազմական ուժերը: Համաձայն 1958 թ Սահմանադրության՝ աֆրիկյան բազաները գտնվում էին Ֆրանսիայի նախագահի անմիջական հրամանատարության տակ, և նախագահը (1958թ. Շառլ դը Գոլը) կարող էր այն կիրառելու որոշում կայացնել:[18]: Շառլ դը Գոլից հետո այդպիսի հարցերով զբաղվում էր վարչապետ Ժորժ Պոմպիդուն (1964-1968թթ.): Սակայն, որպես կանոն, այդպիսի հարցերը քննարկվում էին հատուկ խորհրդում, որի կազմի մեջ մտնում էին պաշտպանության, ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարները: Հատուկ խորհրդի նիստերը հրավիրվում էին տարին երեք կամ չորս անգամ՝ ռազմական

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նախարարի հրավերով (Պիեռ Մեսսենռա 1960-1969թթ.), բայց ամեն դեպքում վերջնական խոսքը Աֆրիկյան հարցերով դը Գոլի գլխավոր խորհրդական Ժակ Ֆոկկարին էր պատկանում, որին կարելի է համարել Ֆրանկաֆրիկայի հիմնադիր[19]: Այսպիսի ռազմական քաղաքականությունը նախ` թույլ էր տալիս խուսափել նախկին գաղութների վրա ռազմական ճնշում գործադրելուց և հետո` Աֆրիկայում այդքան ռազմական բազաների տեղակայումը լուրջ ռազմական ծախսեր էր ակնկալում: Ամեն դեպքում Աֆրիկայում տեղակայած ուժերը թույլ էին տալիս Ֆրանսիային ռազմական գործողությունների դեպքում արագ ուղղորդել ուժերը անհրաժեշտ ուղղությամբ` մինչ կհասնեին ֆրանսիական ուժերը: Ֆրանսիան կազմել էր աֆրիկյան երկրների այնպիսի նեղ խումբ, որտեղ Ֆրանսիան առաջինը կմտներ անհրաժեշտության դեպքում. Փղոսկրյա ափը, Գաբոն, Սենեգալ, Կամերուն և որոշ մասերով Տոգոն: Երկրորդ խմբի պետությունների թվում էին Նիգերը, Չադը, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը(ԿԱՀ): Այստեղ թույլ էին Ֆրանսիայի մշակութային կապերը, փոխարենը մեծ էր տնտեսական հետաքրքրությունը: Այսպես` Ֆրանսիայի ռազմական ներխուժումները Աֆրիկա ունեցել են և` քաղաքական, և, տնտեսական հիմքեր: Հիմք ընդունելով ֆրանս-աֆրիկյան ռազմական պայմանագրերը` Ֆրանսիան իրականացնում էր ռազմական ներխուժումներ` միջամտելով կառավարությունների դեմ ապստամբություններին:

Առաջին ռազմական ներխուժումը, որ արժանի է հիշատակության, 1964թ. էր, երբ ռազմական հեղաշրջումից հետո Ֆրանսիան դեսանտը իջեցրեց Աֆրիկա (Lion Mba): Այնուհետև 1964թ. Գաբոն, Երկրորդ օրինակը 1967թ. Բիաֆրայի պատերազմն է Նիգերիայում: Ֆրանսիան պաշտպանեց Բիաֆրայի գործերը` ընդդեմ Նիգերիայի պետական իշխանության: Քաղաքացիական պատերազմը տվեց մոտ երկու միլիոն զոհ:

1970թ Ֆրանսիան ընդարձակեց իր ռազմական դասավորությունը Աֆրիկայում, որպեսզի իր ազդեցության ոլորտում ներառի Բելգիայի նախկին գաղութներին` Բուրունդի, Ռուանդա, Կահիրե (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը): Հիշատակության են արժանի 1969 թ. [20] և 1978թ. [21] Ֆրանսիական միջամտությունը Չադում. Չադը Հյուսիսային Աֆրիկայից Սև աֆրիկա տանող սահմանին էր, 1977-1978թթ. [22] Կահիրե), (1979թ. Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում): Ֆրանսիայի համար կարևոր էր նաև Կոնգոն (Բրազզավիլ), Կոնգո(Կահիրե), Մալի, Գվինեա և Մավրիտանիան[23]: Այն պետությունները, որոնք Ֆրանսիայի համար կենսական նշանակություն ունեն` Ֆրանսիայի կողմից ապահովվում են ֆինանսական և ռազմական աջակցությամբ: Սակայն իրողությունը ցույց է տալիս, որ Ֆրանսիայի ռազմական ներխուժումները ոչ այնքան նպատակ ունեին պաշտպանելու աֆրիկյան պետություններին և օրինականություն հաստատել այնտեղ, որքան ամրապնդելու իրենց ներկայությունն այդ պետություններում և կայունացնել իր դիրքերն աշխարհում, որպես հզոր պետություն: Այնուամենայնիվ Շառլ դե Գոլի և Պոմպիդուի ժամանակաշրջանում Ֆրանսիան ավելի շատ ձգտում էր խորացնելու տնտեսական և դիվանագիտական հարաբերությունները, քան ռազմական ներխուժումներ իրականացնելու: Կոչտ ուժի քաղաքականությունը Աֆրիկայում տեսանելի եղավ արդեն ասպագաղութացումից հետո: Սակայն Ֆրանսիայի երկարատև ներկայությունն Աֆրիկայում առաջացրեց Աֆրիկյան պետությունների դժգոհությունը

Վալերի Ժեսկար դ'էստենը կառավարման տարիներին (1974-1981թթ.) Ֆրանսիան ռազմական ներխուժում իրականացրեց Արևմտյան Սահարա, Կահիրե, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չադ` նպատակ ունենալով զսպել արտաքին ագրեսիան:

Արդեն 1980-ական թվականների առաջին կեսերին Ֆրանսիան զգալի մեծացրեց

զենքի արտահանումը դեպի Աֆրիկա՝ նպատակ ունենալով դառնալու այդ տարածաշրջանին ամենամեծ զենք մատակարարող պետությունն աշխարհում: Ֆրանսիայի զենքի արտահանման մեկ երրորդը բաժին էր հասնում իր նախկին գաղութներին[24]: Դրանով Ֆրանսիան ուզում էր մեծացնել Աֆրիկայի կախվածությունը Ֆրանսիայից՝ միևնույն ժամանակ նվազեցնելով այլ պետությունների ազդեցությունը Աֆրիկյան մայրցամաքում: Անգամ 1981-1985 թթ տնտեսական դժվարությունների պարագայում Ֆրանսիան շարունակում էր պահել իր առաջնակարգ դիրքերը Աֆրիկայում: Ռազմական քաղաքականությանը զուգահեռ ֆրանսիայի վարած արտարժույթի քաղաքականությունը թույլ տվեց Ֆրանսիային 1960-1990թթ. պահել իր դիրքերը տարածաշրջանում:

Այնուամենայնիվ, Միտերանի կառավարությունը երկու անգամ ներխուժեց Չադ՝ 1983, 1986թթ. երկու անգամ Կահիրե և երեք անգամ Ռուանդա և 1990թ. կրկին Գաբոն: Միտերանի կառավարությունը ավելի հաճախ ռազմական ներխուժումներ իրականացրեց Աֆրիկա, քան իր նախորդները և ի գորու չէր, որ նախկին ռազմական նախարար Պիեռ Մեսերը նրան անվանում էր «Աֆրիկայում ռազմական ակնարկների մանյակ»[25]:

1980-ականներից մինչև 1995 թթ.՝ Ֆրանսուա Միտերանի կառավարման տարիներին, Ֆրանսիան որդեգրել էր «սմիջամտելու քաղաքականություն», սակայն ռազմական ներխուժումները շատացան: Պատճառները երկուսն էին. նախ այն, որ նրանք կառավարեցին երկար և հետո, այդ ընթացքում (1990-2005թթ) Աֆրիկյան անհամեմատ ավելի անկայուն էր: Ռազմական ներխուժումները նպատակ ունեին պաշտպանելու Աֆրիկայում ապրող Ֆրանսիայի քաղաքացիների շահերը (Լիբիա-Չադ պատերազմ և 1994թ Ռուանդայի ցեղասպանությունը): «Ֆրանսիան պետք է հատուկ ուշադրություն դարձնի Երրորդ աշխարհի խնդիրներին», -ասել է Միտերանը[26]: Ի տարբերություն իր նախորդների վարած քաղաքականության՝ սոցիալիստները տարբերվում էին միայն հռչակագրերով: Հարկ է նշել, նաև որ Աֆրիկայում ռազմական քաղաքականություն իրականացնելիս Ֆրանսիան առաջնորդվում էր ոչ միայն իր շահերով, այլ ելնելով նաև ՆԱՏՕ-ի նպատակներից և առաջնահերթություններից [27]: Այդպես հայտարարում էր Ֆրանսիական ռազմական հրամանատարությունը: Ժակ Շիրակի կառավարման տարիներին ևս Ֆրանսիայի ներխուժումներն առաջնորդվում էին Ֆրանսիայի քաղաքացիների պաշտպանությամբ: Ներխուժումները գտնվում էին ՄԱԿ-ի անմիջական վերահսկողության ներքո[28]:

Այսպիսով՝ Ֆրանսիայի ռազմական քաղաքականությունն Աֆրիկայում հենվում էր երեք հիմքերի վրա. քաղաքական, տնտեսական, իրավապայմանագրային: Քաղաքական առումով կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիայի վերաբերմունքը Աֆրիկայի նկատմամբ անփոփոխ է. այն շարունակում է Ֆրանսիայի համար մնալ որպես ազդեցության ոլորտ: Ֆրանսիան մեծ ջանքեր է գործադրում այդ ազդեցությունը պահելու համար, քանզի այն հնարավորություն է տալիս Ֆրանսիային ամրապնդելու իր դիրքերն աշխարհում և մնալու որպես մեծ խաղացող ԱՄՆ և Չինաստանի հետ մրցակցության նույն ոլորտում: Հաջորդ հիմքը տնտեսականն է, քանզի Աֆրիկյան իր մեծ տնտեսական պոտենցիալով դարձել է մրցակցության օբյեկտ նաև այլ զերտբությունների համար, և ռազմական ներխուժումների հաջողության դեպում Ֆրանսիան կունենար ոչ միայն քաղաքական այլև տնտեսական դիվիդենտներ: Ֆրանսիան գտնում էր, որ անգամ ապագադրությամբ պետք է շահած դուրս գալ [29]: Եվ, վերջապես, երրորդ հիմքը իրավապայմանագրայինն էր, որը կոչված էր ծառայելու առաջին երկուսին. Երկկողմ ռազմական պայմանագրերի հիմքով ներխուժումներ իրականացնելով՝ Ֆրանսիան փորձում էր քաղաքականապես և տնտեսապես շահած դուրս գալ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Le Monde, 23 avril 2003.
2. Andrew Hansen, The French Military in Africa, February 8, 2008.
3. Le Monde, 13 juillet 1995.
4. Справочник по практике Совета Безопасности. Дополнение за 1996–1999 годы, Организация Объединенных Наций, Подписание Договора о зоне, свободной от ядерного оружия, в Африке (Пелиндабский договор), Нью-Йорк, 2016, стр. 862
5. Griffin Ch. French Military Interventions in Africa: French Grand Strategy and Defense Policy since Decolonization. Los Angeles: University of Southern California School of International Relations, 2009. p 22
6. Коновалов И., Военные операции Франции в Африке, Центр стратегической конъюнктуры, 2014, глава 1, стр.14
7. Մույն տեղում:
8. Archives Nationales de la France, Série AG, 5 AG 1, Papiers des chefs de l'État, État général des fonds, Charles de Gaulle, Président de la République (1959-1969)
9. Մույն տեղում:
10. Пастернак Р., Роль Франции в разрешении вооруженных конфликтов в Африке <http://www.modernarmy.ru/article/425/rol-francii-v-afrike>
11. Archives Nationales de la France, Série AG, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches.
12. Chaigneau P. La politique militaire de la France en Afrique, Paris: Centre des Hautes Etudes sur L' Afrique et L'Asie Modernes, 1984. p. 107
13. Пастернак Р., Роль Франции в разрешении вооруженных конфликтов в Африке <http://www.modernarmy.ru/article/425/rol-francii-v-afrike>
14. Archives Nationales de la France, Série AG, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches
15. Մույն տեղում:
16. Ֆրանկոֆոն են այն երկրները, որոնք օգտագործում են ֆրանսերենը՝ մասամբ կամ ամբողջությամբ, և ծանոթ են նրա մշակույթին և պատմությանը: Ֆրանկոֆոնիա բառը 1-ին անգամ շրջանառվել է 1880 թվականին աշխարագրագետ Օնեգիմ Ռեկլուի կողմից, որի նպատակն էր աշխարհի բնակչության դասակարգումը՝ ըստ նրանց լեզվական չափանիշների:
17. Chaigneau P. La politique militaire de la France en Afrique, Paris: Centre des Hautes Etudes sur L' Afrique et L'Asie Modernes, 1984. p. 109
18. la Constitution du 4 octobre 1958, Titre II: Le Président de la République (articles 5 à 19)
19. Archives Nationales de la France, Série AG, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches
20. Le Monde, 14 Mai, 1969
21. Le Monde, 21 avril 1978
22. Մույն տեղում:
23. Коновалов И., Военные операции Франции в Африке, глава 1, стр.63
24. Ндоноджи П., Политика Франции в отношении стран Центральной и Западной Африки в 80-е гг., автореф. канд.истор.н., Киев, 1993.
25. “un maniaque de la gesticulation militaire en Afrique.” Messmer, Les blancs s'en vont, 239.
26. L'Etat de la France 95-96. p.591.
27. Trachtenberg M., France and NATO, 1949-1991, Journal of Transatlantic Studies Vol. 9,

No. 3, September 2011, 184194

28. Kratz I., French-African relations: a historical perspective (1885-1994), 2014

29. Дузь С., Колониальная Африка и французский интерес, <http://www.warandpeace.ru/ru/news/view/86078/>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Աֆրիկյան մայրցամաքում Ֆրանսիայի ռազմական միջամտության քաղաքականության հիմքերը ժաննա Հարությունյան

Ֆրանսիայի ռազմական քաղաքականությունը Աֆրիկայում հենվում էր երեք հիմքերի վրա. քաղաքական. Ֆրանսիայի համար Աֆրիկյան աշխարհում իր դիրքերն ամրապնդելու կարևոր գործոն էր: Տնտեսական, Ֆրանսիան լծակներ ուներ աֆրիկյան շուկաներում, և մեծապես շահագրգռված էր իր ապրանքը այնտեղ յուրացնելու գործում, և իրավապայմանագրային. այս դաշտն ապահովում էին ֆրանս-աֆրիկյան ռազմական պայմանագրերը, որոնք հիմք էին Ֆրանսիայի ռազմական ներխուժումների համար: Իրականում իրավապայմանագրային հիմքը գործիք էր Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական ձգտումներն իրագործելու համար:

РЕЗЮМЕ

Основы политики военного вмешательства Франции в африканском континенте Жанна Арутюнян

Ключевые слова: Франция, Африка, военное вмешательство, сфера влияния (*pré carré*), политические интересы, экономические интересы, договорно-правовая основа

Французская военная политика в Африке имеет три основы: *политическая*— для Франции Африка важна для укрепления своих позиций в мире; *экономическая*— маркетинговая политика Франции имеет более глубокие связи в Африке, и Франция стремится продать свои товары на рынках Африки; *договорно-правовая*— в соответствии с этим Франция выполняет свои военные интервенции, чтобы получить политические и экономические дивиденды.

SUMMARY

Basis of France's military intervention policy in African continent Zhanna Harutyunyan

Keywords: France, Africa, military intervention, sphere of influence (*pré carré*) political interests, economic interests, legal basis

France military policy in Africa has three bases: France uses Africa in order to reinforce its position in the world; France marketing policy has deeper ties in Africa and France is really interested in selling its goods in African markets; which consists of France-African military agreements, according to which France fulfills its military intervention so as to get political and economic dividends.